## *5.9. Ստանդարտացումը, սերտիֆիկացումը և հավատարմագրումը 2007 թվականին*

Ըստ ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության ամփոփ տեղեկատվության, 2007թ. ստանդարտացման, սերտիֆիկացման, հավատարմագրման և նորմատիվ փաստաթղթերի պարտադիր պահանջների պահպանման պետական վերահսկողության ոլորտներում իրականացված գործունեությունը բնութագրվել է հետևյալ ցուցանիշներով.

*Ստանդարտացում:* Ընդունվել և պետական գրանցում է ստացել ազգային 322 ստանդարտ: ՀՀ տարածքում գործադրվել են 214 միջպետական, 48 միջազգային և 60 ՀՀ ստանդարտներ: Պետական գրանցում է ստացել արտադրանքի վերաբերյալ ՀՀ տեխնիկական 530 պայման: Թողարկվել է 15 անուն տեղեկատվական նյութ:

*Սերտիֆիկացում:* Տրվել է համապատասխանության 10811 սերտիֆիկատ, որից 10137-ը` ներմուծվող, 118-ը` արտահանվող արտադրանքի համար, մնացած 556-ը տրվել է ՀՀ-ում արտադրվող սերիական արտադրանքի համար: Մերժվել է արտադրանքի սերտիֆիկացման 18 հայտ, որից 16-ը` արտադրանքի անհամապատասխանության պատճառով:

*Հավատարմագրում:* ՀՀ տարածքում հավատարմագրվել է սերտիֆիկացման 5 մարմին և 21 լաբորատորիա:

**Ստանդարտացման, սերտիֆիկացման, հավատարմագրման գործունեության համեմատական ցուցանիշները, 2007թ. հունվար-դեկտեմբեր**

*(հավելաճը /նվազումը «-» նշանով/)*

| | Ընդամենը, *միավոր* | Հունվար-դեկտեմբերի համեմատ, *%* | | |
|---|---|---|---|---|
| | | 2004թ. | 2005թ. | 2006թ. |
| Ընդունված և պետական գրանցում ստացած ազգային ստանդարտների քանակը | 322 | 5.2 | - 8.8 | 92.8 |
| Պետական գրանցում ստացած տեխնիկական պայմանների քանակը | 530 | 29.0 | 29.3 | 18.3 |
| Թողարկված տեղեկատվական նյութերի քանակը | 15 | 15.4 | 2.1 անգամ | 7.1 |
| Տրված համապատասխանության սերտիֆիկատների քանակը | 10811 | 54.4 | 26.2 | - 0.2 |
| որից` | | | | |
| ներմուծվող արտադրանքի համար | 10137 | 79.4 | 31.5 | 9.6 |
| արտահանվող արտադրանքի համար | 118 | - 41.6 | - 73.6 | 2.6 |
| Արտադրանքի սերտիֆիկացման մերժված հայտերի քանակը | 18 | - 21.7 | - 59.1 | - 18.2 |
| ՀՀ տարածքում հավատարմագրված լաբորատո-րիաների քանակը | 21 | - 44.7 | - 53.3 | - 4.5 |

*Անորակության պատճառով չսերտիֆիկացված արտադրանք:* 2007թ. անորակության պատճառով չեն սերտիֆիկացվել ներմուծված և ՀՀ-ում արտադրված արտադրանքի մի շարք տեսակներ:

## Անորակության պատճառով չսերտիֆիկացված արտադրանքի բաշխվածությունն ըստ երկրների, 2007թ.

| Երկիրը | Արտադրանքի անվանումը | Քանակը |
|---|---|---|
| Հայաստանի Հանրապետություն | Օղի «Էտյուդ» | սերիական արտադրություն |
| | Պաղպաղակ | սերիական արտադրություն |
| Ռուսաստանի Դաշնություն | Բանող հակասառիչ | 38440 *հատ* |
| Գերմանիա | Յոգուրտային արտադրանք | 292.23 *կգ* |
| Ֆրանսիա | Գինիներ | 417 *հատ* |
| Մեծ Բրիտանիա | Կերակրի աղ | 225 *կգ* |
| | Ատամի մածուկ | 137 *հատ* |
| Թուրքիա | Եղունգի լաք | 1.128 *կգ* |
| Իրանի Իսլամական Հանրապետություն | Գազային կենցաղային ջեռուցման ջերմափոխանցիչներ | 419 *հատ* |
| | Հանքային պարարտանյութ նատրիումի նիտրատ | 3950 *կգ* |
| | Շարժիչի յուղ | 29700 *կգ* |
| Անհայտ | Սննդամթերք | … |
| | Փափուկ խաղալիքներ կենդանիների պատկերով | … |